

Մամլոյ Հաղորդագրութիւն

Հ.Բ.Ը.Մ.ը Կը Շնորհաւորէ Նիկոլ Փաշինեանը Հայաստանի Հանրապետութեան Նոր Վարչապետի Պաշտօնին Իր Ընտրութեան Առիթով

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը կը շնորհաւորէ Նիկոլ Փաշինեանը Հայաստանի Հանրապետութեան Վարչապետի պաշտօնին իր հանգրուանային կարեւորութիւն ունեցող ընտրութեան առիթով:

Անոր պաշտօնակոչումը կ'իրականանայ երկրէն ներս աշխուժացած քաղաքացիական կեանքի, վերանորոգ յոյսի եւ նոր հեռանկարներու համաժողովրդային մթնոլորտի մը մէջ: Կառուցողական բարեփոխումներու կարելիութիւնը յուսալի կը թուի այսօր, երբ Հայաստան կը դարձնէ կառավարման անցեալի էջը, ազգային միասնականութեան եւ բարգաւաճումի նոր փուլ թեւակոխելու տրամադրութեամբ:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան կը գտնուի ազգային նախապատուութիւններու օրակարգը մշակելու եւ պետութեան բնականոն գործընթացը ղեկավարելու ծանր պատասխանատուութեան առջեւ: Լայն տարողութիւն ունեցող այս յանձնառութեան ստանձնումը կ'ենթադրէ մնայուն մարտահրաւերներու դիմագրաւումին առընթեր, Հայաստանի վերածնունդէն ասդին, անցնող 27 տարիներու ընթացքին իրագործուած ձեռքբերումներու ամրապնդումը:

Հ.Բ.Ը.Մ.ը յաջողութեան իր լաւագոյն բարեմաղթութիւնները կը փոխանցէ Վարչապետ Նիկոլ Փաշինեանին, իր բոլոր նախաձեռնութիւններու իրագործումին ուղղութեամբ: Մենք պատրաստ ենք ժողովուրդի կեանքի բարելաւման ուղղուած մեր աշխատանքներով, արդիւնաւետ գործակցութիւն ցուցաբերելու նորընտիր վարչապետին եւ իր կառավարչական կազմին:

Հաւատարիմ 112 տարիներու իր ազգանուէր առաքելութեան, Հ.Բ.Ը.Մ.ը պիտի շարունակէ գործել հայրենի կառավարութեան կողքին, ի նպաստ հայ ժողովուրդի բարօրութեան, Հայաստանի մէջ թէ սփիւռքի տարածքին, իր կրթական, մշակութային, ընկերային, տնտեսական եւ ըստ անհրաժեշտութեան, մարդասիրական օգնութեան ծրագիրներով:

Ինչպէս տարբեր առիթներով բազմիցս յայտարարած ենք, Հ.Բ.Ը.Մ.ը համոզուած է, որ կառավարական բոլոր մարմիններու, ինչպէս նաեւ Հայ Եկեղեցւոյ սերտ համագործակցութեամբ միայն կարելի է լաւագոյնս ծառայել մեր Ազգի եւ ժողովուրդի շահերուն:

Հիմնուած 1906-ին, Հ.Բ.Ը.Մ.ը (www.agbu.org), աշխարհի մեծագոյն ոչ-շահամէտ հայկական կազմակերպութիւնն է: Միութեան կեդրոնը կը գտնուի Նիւ Եորք, Ամերիկայի Միացեալ Նահանգներ: Հ.Բ.Ը.Մ.ը կը սատարէ հայեցի ինքնութեան եւ ժառանգութեան պահպանումին եւ մշակումին՝ կրթական, մշակութային եւ մարդասիրական ծրագիրներով: Միութեան գործունէութիւնները կ'ընդգրկեն տարեկան աւելի քան 500,000 հայեր, աշխարհի տարածքին:

Հ.Բ.Ը.Մ.ի եւ անոր համաշխարհային ծրագիրներուն մասին տեղեկութիւններու համար այցելեցէք www.agbu.org կայքէջը:

Յաւելեալ Տեղեկութեանց համար - Կապ

AGBU Press Office

55 East 59th Street

New York, NY 10022-1112

Phone: 212.319.6383

Email: communications@agbu.org